

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՆՆՈՎԵՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Սույն թվականի հունիսի 15-ին Արևմտյան Գերմանիայի Հաննովեր քաղաքի եկեղեցական խորհրդի ու համայնքի նախաձեռնությամբ տեղի է ունենում էկումենիկ մի հանդիպում հայ համայնքի հետ՝ գլխավորությամբ Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Հակոբ վարդապետ Գըլընճյանի:

Առավոտյան ժամը 10.30-ին Ֆրիդենս եկեղեցում, բազմաթիվ հայ և գերմանացի հավատացյալների ներկայությամբ, տեղի է ունենում աղոթք և ճառերի փոխանակում՝ նվիրված երկու Եկեղեցիների և ժողովուրդների բարեկամական միության ու եղբայրության:

Քաղաքի գերմանական երգչախմբի մի շարք հոգևոր երգեր կատարելուց հետո, հայոց երգչախումբը՝ ղեկավարությամբ պրն. Փոլ Ավգերոզլույանի, կատարում է Կոմիտասյան «Սո՛ւրբ, Սու՛րբ...», «Խորհուրդ խորին», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» և «Մարմին Տէրունական» տաղերը՝ մեծ բավականություն պատճառելով հյուրերին:

Արարողությունից հետո համայնքապետ Կարլ Ֆրիդրիխը, ողջունելով բոլոր հավատացյալների ներկայությունը, հրավիրում է Հակոբ վարդապետին՝ ներկայացնելու իր համայնքն ու եկեղեցին: Տ. Հակոբ վարդապետը գերմաներեն լեզվով նախ շնորհակալություն է հայտնում այդ հանդիպման ու հյուրասիրության համար, ապա համառոտակի ներկայացնում Հայ Եկեղեցին, նրա առաքելական ծագումը, անցյալում հայ ժողովրդի կրած տառապանքներն ու նահատակությունները՝ «վասն Յիսուսի և վասն Հայրենեաց»:

Այնուհետև Եկեղեցիների էկումենիկ հարաբերությունների մասին ասում է.

«Էկումենիկ շարժումը դրական և քաջալերելի մի երևույթ է Եկեղեցու կյանքում, որտեղ Եկեղեցիներն էլ իրավունք ունեն հավասար ընդ հավասարի զրույցի և իրար հետ գործակցության ուղի բռնելու՝ իրագործելով մեր Փրկչի այն բացառիկ ցանկությունը, որ է՝ միությունը մեր ամենքին:

Եկեղեցիների տարբեր ավանդությունները երբեք չեն կարող բաժանման երևույթ նկատվել: Մենք քաջ գիտենք, որ յուրաքանչյուր ազգ տարբեր նկարագիր և խառնըվածք ունի, որ յուրաքանչյուր ազգ իրենից ներկայացնում է քրիստոնեական Ավետարանով ապրված մի կյանք»:

Այնուհետև հայր սուրբը խոսում է նաև Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի (1167—1173) Եկեղեցիների միության վերաբերյալ կատարած աշխատանքների մասին:

Հանդիպման վերջում տեղի է ունենում հավատացյալների համայնական սիրո ճաշ: Սեղանի շուրջ հարցազրույց է տեղի ունենում երկու Եկեղեցիների հավատացյալների միջև՝ բարեկամական մթնոլորտում:

Հաջորդ օրը այս հանդիպման մասին արձագանքում է նաև գերմանական մամուլը: